Ողջոյն Ձեզ, բնակիչք դաշտաց և լերանց Տինական երկրագործ ժողովուրդ, որ սիրէք զհողն և մաճ, զոչխարն և տաւար, դուք աշխարհի բարի և անխարդախ մշակն էք, դուք հարազատ որդիք էք նախահօր մերում. գործեցէք զերկիր և պահեցէք, գիտելով թէ միայն երկիրն է Ձեր կեանք և զօրութիւն. միշտ ջանացէք անկորուստ պահել այդ հայրենատուր ժառանգութիւն։

Ցետ ողջունելոյ զամենայն դասակարգս Ձեր, ժողովուրդ Հայոց, դառնամ արդ պատմել Ձեզ թէ զի՞նչ արար Տէր ընդ իս և գիտէք արդէն, զի հռչակեցաւ ընդ ամենայն աշխարհ։

Ո՛չ որպէս կամին մարդիկ, այնպէս առնէ Տէր, այլ որպէս Ինքն կամի և ո՛վ կարէ հասու լինել անքննին խորհրդոց Նորա. զի ո՞ գիտաց զմիտս Տեառն և ո՞ եղեւ Նմա խորհրդակից, թէ խելամուտ արասցէ զՆա։

Մինչ փոքրիկ և կրտսեր էի ի մէջ եղբարց և արածէի զիմ փոքրիկ հօտն ի լեառն Վարագայ, առ Հովանեաւ Քրիստոսի Աւագ սուրբ Նշանին, ձեռն Տեառն կալաւ զիս, ած յԵրուսաղէմ և կացոյց ի վերայ լերինն Սիօնի, ուր երեւեցաւ Բանն Բժիշկ մարդկութեան և Վերանորոգիչ հնացեալ մարդոյն։

Յերեսուն ամաց անտի մինչեւ ցեօթանասուն ամն իբրեւ խեցեղէն մի տկար անօթ միշտ վարեալ և գլորեալ ընդ քարքարուտ ելեւէջ առապարս աշխարհի, այնպէս եղէ զի կարծեցին մարդիկ թէ իսպառ ջախջախեցայ, և զի՞նչ էր, որ կենդանի պահէր զիս. միայն հեզութիւն և իսպառ համբերութիւն։

Անդ ի Սիօն մօտ էր Նորոգիչ Բրուտն Ցիսուս, որ անդրէն վերստին նորոգեաց զբեկեալ անօթս։ Մի անգամ և երկիցս հիւանդացայ յոյժ, այնպէս թուեցաւ ինձ թէ հասեալ կամ առ դուռն գերեզմանին, և եղէ ես որպէս զոստայն մերձ ի հատանիլ, սիրտ իմ և շունչ գելաւ յիս, լացի և գոչեցի. ո՛վ Տէր, դեռ տարաժամ է ասացի, դեռ բազմապատիկ պարտս ունիմ առ Քեզ և առ եկեղեցին. թոյլ տուր, դարձո՛ զոգի իմ, զի կեցից և վճարեցից։ Ո՜հ թէ մեռանիմ չմնամ պարտապան առաջի Քո ահաւոր Ատենիդ։

Լուաւ ինձ Տէր և ողորմեցաւ, և յաւել ինձ նոր կեանս, վերացոյց ի լեռնէն Սիօնի, եդ ի Սիօն Արարատայ, ի Կաթուղիկէ